

Օ Ր Օ Ր



Այն գիշեր նորէն, կը պատմեն զիրեն,
Աստուած մարդերու եղաւ շատ մօտիկ.
Շուրթ շուրթի տուած երկինքն ու երկիր
Երգեցին անոնց օրօր մը գողտրիկ:

Օրօ՛ր անօրրան Յիսուսին համար,
Հրեւեակները երկինքն են մոռցեր
Իր ոսկէ օրրան, եւ ինք ցրտահար
Մըսուրի մը գոգն է ապաստաներ:

Օրօ՛ր մանկացած Աստուծոյ համար,
Բերանէն անոնց ի՞նչ մանուկ չեղան,
Ու բերնովն անոնց, որոնց լուսափառ
Փաղանգն աւեհեց տաղմ աղաւթաբեր:

Օրօ՛ր լուսածին Յիսուսին համար,
Թող անոյժ տունով մանուկն արբեցայ,
Հեռուն կը հիւսդին ծայր, խաչ, ու խաւար,
Եւ լուս սերովքէ մ'որ կը հեծկըջայ:

Օրօ՛ր որբացած անուշիկ Աստուծոյն,
Երկինքէն իջած՝ կ'երգեն հրեւեակներ,
Յիսուս այս գիշեր ինչո՞ւ չունի բուն,
Աստուծոյ անդին՝ նայուածքը սեւեռ:

Երբ մարիամ կ'երգէ, բոլոր իր երգեր,
Լոյսին տակ աստղին որ կ'այրի արդար,
Բայց ինչո՞ւ Յիսուս այն իր չի փակեր,
Եւ կոյսը կուլայ արցունքն իր պայծառ:

Ու մօրն հոգիէն շիրտ արցունքի,
Կ'իյնան այժմ մէջ մանուկին Աստուած,
Ան մոռցած երկինք եւ օրրան ոսկի,
Քունով կը փակէ իր այժերը թաց:

Ո՛ր վիշտը մարդուն, եւ գուրն Աստուծոյ,
Որ երկինք երկինքն բերին մօտ այնքան,
Եւ արցունքը մօր — հուր կայլակ սիրոյ —
Որ երկինքներու կը փոխէ աշխարհ: